

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2017 թ. մայիսի 4-ի թիվ 7 նիստում

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ _____ Ա. Հ. Սիմոնյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ 2017

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «ԵՊՀ Բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» դեկավար ձեռնարկը սահմանում է բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը, ընդհանուր բովանդակությունը, ուսանողի բեռնվածությունն ըստ կիսամյակների, կառուցամասերի և կրթամասերի, ուսումնական աշխատանքի ձևերի, ծրագրի դասընթացների և կրթական այլ մոդուլների կազմն ու աշխատաձևավալները՝ արտահայտված ECTS կրեդիտներով:
- 1.2. Բակալավրի կրթական ծրագիրը բաղկացած է 2 հիմնական կառուցամասերից՝ ընդհանուր կրթական և մասնագիտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքներն առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար իրականացվում են համաձայն աղյուսակ 1-ում և 2-ում ներկայացված աշխատաձևավալների համամասնության.

Աղյուսակ 1. Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի ընդհանուր կրթական և մասնագիտական կառուցամասերի հարաբերակցությունը

Կիսամյակ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	Ընդամենը
Ընդհանուր կրթական կառուցամաս, <i>կրեդիտ</i>	32		12		0	0	0	0	44
Մասնագիտական կառուցամաս, <i>կրեդիտ</i>	30		50		30	30	30	26	196
Ընդամենը, <i>կրեդիտ</i>	31	31	31	31	30	30	30	26	240

Աղյուսակ 2. Հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի ընդհանուր կրթական և մասնագիտական կառուցամասերի հարաբերակցությունը

Կիսամյակ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	Ընդամենը
Ընդհանուր կրթական կառուցամաս, <i>կրեդիտ</i>	32		12		0	0	0	0	0	0	44
Մասնագիտական կառուցամաս, <i>կրեդիտ</i>	16		36		24	24	24	24	22	26	196
Ընդամենը, <i>կրեդիտ</i>	24	24	24	24	24	24	24	24	22	26	240

- 1.3. Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի տևողությունը 4 տարի է (8 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողություն, որից 15 շաբաթը հատկացվում է լսարանային պարապմունքներին, 2-ը՝ ընթացիկ քննություններին և ստուգաքննություններին, իսկ 3-ը՝ եզրափակիչ քննություններին:

- 1.4. Հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի տևողությունը 5 տարի է (10 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողություն, որից 4 շաբաթը հատկացվում է լսարանային պարապմունքներին, 8-ը՝ ինքնուրույն աշխատանքին, խորհրդատվություններին և ընթացիկ քննություններին, իսկ 4-ը՝ եզրափակիչ քննություններին: Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ և ռեկտորի թույլտվությամբ լսարանային պարապմունքները, տրված ժամաքանակների սահմաններում (իսկ լեզվական մասնագիտությունների գծով՝ նաև ժամաքանակի ավելացմամբ), կարող են իրականացվել նաև այլ գրաֆիկով:
- 1.5. Բակալավրի կրթական ծրագրի կառուցման հիմքում դրված է 240 կրեդիտ ուսումնական բեռնվածությունը, որն առկա ուսուցման մեկ կիսամյակի համար կազմում է 30 կրեդիտ (10% թույլատրելի շեղումով), իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 24 կրեդիտ (10% թույլատրելի շեղումով): Ուսանողի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածությունն առկա և հեռակա ուսուցման համար 1,5 կրեդիտ է ($30 \text{ կրեդիտ} / 20 \text{ շաբաթ} = 1,5$ կամ $24 \text{ կրեդիտ} / 16 \text{ շաբաթ} = 1,5$) կամ 45 ժամ, իսկ ուսումնական կրեդիտի ժամային համարժեքը՝ 1 կրեդիտ = 30 ժամ:
- 1.6. Ընդհանուր կրթական կառուցամասի աշխատածավալը ծրագրի 240 կրեդիտ ընդհանուր ծավալում կազմում է առավելագույնը 44 կրեդիտ (18%), իսկ մասնագիտական կառուցամասինը՝ նվազագույնը 196 կրեդիտ (82%): Երկու կառուցամասերն էլ ներառում են տարբեր կրեդիտատարությամբ դասընթացներ և ուսումնական մոդուլներ: Ընդհանուր կրթական կառուցամասն ընդգրկում է պարտադիր և կամընտրական դասընթացներ: Մասնագիտական կառուցամասը ներառում է պարտադիր, կամընտրական կամ հատուկ մասնագիտական դասընթացներ, ինչպես նաև կրթական այլ մոդուլներ (կուրսային աշխատանքներ, պրակտիկա (ներ) և 20 կրեդիտ ծավալով ավարտական աշխատանք):
- 1.7. Առկա ուսուցման բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական առավելագույն լսարանային բեռնվածությունը 1-ից 4-րդ կիսամյակներում կազմում է մինչև 30 ժամ, իսկ 5-ից 7-րդ կիսամյակներում՝ մինչև 28 ժամ: Առկա ուսուցման 8-րդ, իսկ հեռակա ուսուցման՝ 10-րդ կիսամյակներում լսարանային բեռնվածություն չի նախատեսվում: Կրթական այն ծրագրերում, որտեղ նախատեսվում են ուսումնական պրակտիկաներ՝ տվյալ կիսամյակի լսարանային բեռնվածությունը համապատասխանաբար նվազում է:
- 1.8. Հեռակա ուսուցման բակալավրի ծրագրի դասընթացների լսարանային աշխատանքի ժամաքանակը սահմանվում է առկա ուսուցման ձևի լսարանային

ժամերի 1/3-ի չափով, իսկ մնացածը նախատեսվում է ուսանողի ինքնուրույն աշխատանքի համար:

- 1.9. Ծրագրի բաղկացուցիչ դասընթացների կրեդիտներով արտահայտված աշխատածավալը հաշվարկվում է՝ ելնելով աղյուսակ 3-ում ներկայացված ժամային համամասնություններից¹:

Աղյուսակ 3. Դասընթացի (մոդուլի) ինքնուրույն աշխատածավալի որոշման նորմերը

Դասընթաց/մոդուլ			
Շաբաթական լսարանային պարապմունք			Շաբաթական ինքնուրույն աշխատանք
Ժամ	պարապմունքի ձևը		Ժամ
1	դասախոսություն	+	1 – 2 ²
1	սեմինար/գործնական	+	0.75 – 1.5
1	լաբորատոր	+	0.5-1

1.9.1. Դասընթացի (մոդուլի) շաբաթական լրիվ աշխատածավալը որոշվում է ուսանողի լսարանային և ինքնուրույն աշխատանքի ժամաքանակների գումարով: Ելնելով լսարանային պարապմունքի ձևից և համապատասխան ժամաքանակից՝ որոշվում է ուսանողից պահանջվող ինքնուրույն աշխատանքի ծավալը, որի և լսարանային ժամաքանակի հանրագումարը կազմում է դասընթացի շաբաթական լրիվ աշխատածավալը:

1.9.2. Դասընթացին հատկացվող կրեդիտների քանակը որոշվում է՝ շաբաթական լրիվ բեռնվածությունը բազմապատկելով 15 շաբաթի և ստացված գումարը 30 ժամի վրա բաժանելով:

1.9.3. Դասընթացին հատկացվող լսարանային ընդհանուր ժամաքանակը չի կարող գերազանցել ինքնուրույն աշխատանքների համար նախատեսվող ժամաքանակը:

¹ Դասընթացի կրեդիտը (աշխատածավալը) պայմանավորված է պարապմունքի ձևով, դասավանդման և ուսումնառության մեթոդներով, դասընթացի բովանդակային առանձնահատկություններով և այլն: Միևնույն լսարանային ժամաքանակի պարագայում տարբեր դասընթացներ կարող են ունենալ տարբեր աշխատածավալներ, հետևաբար՝ նաև կրեդիտներ:

² Պահանջվող ինքնուրույն աշխատանքի շաբաթական ժամաքանակը տրված միջակայքում որոշում է ամբիոնը՝ հաշվարկելով 1 ժամ լսարանային պարապմունքի ընթացքում մատուցված նյութը յուրացնելու համար ուսանողից պահանջվող իրական ժամաքանակը:

1.10. Առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրերի ուսումնական պլանի ձևաթերթերը ներկայացված են համապատասխան հավելվածներում:

2. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2.1. Ընդհանուր կրթական կառուցամաս

Ընդհանուր կրթական կառուցամասը նպատակաուղղված է բակալավրի որակավորման ընդհանուր հենքի (ընդհանրական/փոխանցելի գիտելիքներ և կարողություններ) ապահովմանը: Այն ընդգրկում է պարտադիր և կամընտրական դասընթացներ:

2.1.1. ***Պարտադիր դասընթացների*** ընդհանուր աշխատածավալը 40 կրեդիտ է, որը ներառում է 14 մոդուլ և Ֆիզդաստիարակությունը, որի համար կրեդիտ չի հատկացվում (տե՛ս Հավելված 1, 2, 3 և 4): Այս դասընթացները իրականացվում են 1-ին և 2-րդ կուրսերում և նպատակաուղղված են ուսանողների ընդհանրական (փոխանցելի) գիտելիքների և կարողությունների ձևավորմանը և զարգացմանը, ինչպես օրինակ՝ մայրենի և օտար լեզուներով գրավոր և բանավոր հաղորդակցմանը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը, իրավունքի հիմնադրույթների ճանաչմանը, արտակարգ իրավիճակներում ճիշտ և կազմակերպված կողմնորոշմանը և այլն: ***2.1.1. Էնթակետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի՝ 2017թ. դեկտեմբերի 21-ի նիստի թիվ 3/4 որոշմամբ:***

2.1.2. ***Կամընտրական դասընթացների*** ընդհանուր աշխատածավալը 4 կրեդիտ է և ներառում է 2 կրեդիտանոց 2 դասընթաց (տե՛ս Հավելված 1, 2, 3 և 4): Կամընտրական դասընթացները նպատակաուղղված են ուսանողների սոցիալ-տնտեսական, բնագիտական և մշակութային ընդհանուր գիտելիքների ձևավորմանը և զարգացմանը: Կամընտրական դասընթացներն իրականացվում են 2-րդ կուրսում, իսկ ուսանողների կողմից դրանց ընտրությունը կատարվում է 1-ին կուրսի 2-րդ կիսամյակում՝ մինչև ապրիլ 1-ը: Կամընտրական դասընթացների բաշխումն ըստ ֆակուլտետների և կիսամյակների իրականացվում է Ուսումնամեթոդական վարչության հետ համատեղ: Կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկն ընդգրկում է միայն 2 կրեդիտանոց դասընթացներ: Վերոնշյալ ցանկը յուրաքանչյուր ուսումնական տարվա համար կարող է վերանայվել ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ: Կամընտրական դասընթացը կայանում է, եթե դրանում ընդգրկված են նվազագույն թվով ուսանողներ (համաձայն՝ ԵՊՀ դասախոսական կազմի

ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերի): Անհրաժեշտության դեպքում կարող են ձևավորվել միջֆակուլտետային հոսքեր: **2.1.2. ենթակետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի՝ 2017թ. դեկտեմբերի 21-ի նիստի թիվ 3/4 որոշմամբ:**

2.2. Մասնագիտական կառուցամաս

Մասնագիտական կառուցամասը նպատակաուղղված է բակալավրի որակավորման մասնագիտական հենքային գիտելիքների և կարողությունների ձևավորմանը և զարգացմանը: Այն ընդգրկում է պարտադիր մասնագիտական, կամընտրական կամ հատուկ մասնագիտական դասընթացներ և կրթական այլ մոդուլներ: Մասնագիտական կառուցամասի պարտադիր և կամընտրական (հատուկ մասնագիտական) մոդուլ-դասընթացների ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 42-ը:

2.2.1. ***Պարտադիր մասնագիտական դասընթացների*** աշխատածավալը 154 կրեդիտ է, իսկ հատուկ մասնագիտական դասընթացների առկայության պարագայում՝ 142 (տե՛ս Հավելված 1, 2, 3 և 4): Այս կրթամասի բովանդակությունը, դասընթացների կազմն ու դրանց կրեդիտատարությունը որոշում են ծրագիրն իրականացնող ֆակուլտետները և ամբիոնները՝ ապահովելով բակալավրի կրթական մակարդակում տվյալ մասնագիտության համար պահանջվող գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով որակավորումների ազգային (առկայության դեպքում նաև ոլորտային) շրջանակների և մասնագիտական աշխատաշուկայի արդի պահանջները, ինչպես նաև տվյալ մասնագիտության միջազգային ծրագրային չափանիշները և հենանիշները:

2.2.2. ***Կամընտրական մասնագիտական դասընթացներն*** ապահովում են ուսանողի նեղ մասնագիտական նախասիրություններով պայմանավորված հատուկ գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Կամընտրական մասնագիտական դասընթացների ընդհանուր աշխատածավալը 12 կրեդիտ է: Առաջարկվող դասընթացների ցանկը ներառում է ընտրվող դասընթացների քանակից կրկնակի ավել և միննույն կրեդիտատարությամբ դասընթացներ: Այս կամընտրական դասընթացներն իրականացվում են 5-7-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 7-9-րդ) կիսամյակներում:

2.2.3. ***Հատուկ մասնագիտական դասընթացներ.*** Կրթական ծրագրի կառուցվածքում, ելնելով մասնագիտության առանձնահատկություններից, կամընտրական մասնագիտական դասընթացների փոխարեն կարող են նախատեսվել հատուկ մասնագիտական դասընթացներ: Դրանք նպատակաուղղված են մասնագիտության որևէ նեղ ոլորտում խորացված գիտելիքների և կարողությունների ձեռքբերմանը: Հատուկ մասնագիտական դասընթացների ընդհանուր ուսումնական

աշխատածավալը 24 կրեդիտ է: Դասընթացներն իրականացվում են 5-7-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 7-9-րդ) կիսամյակներում:

2.2.4. Կրթական այլ մոդուլներ. Ծրագրի կրթական այլ մոդուլների աշխատածավալը 30 կրեդիտ է, որը ներառում է 2 կրեդիտանոց 2 կուրսային աշխատանք, 6 կրեդիտ աշխատածավալով մասնագիտական պրակտիկա (կրթական ծրագրի առանձնահատկություններից ելնելով՝ կարող է ներառվել նաև համապատասխան աշխատածավալով ուսումնական պրակտիկա) և 20 կրեդիտ աշխատածավալով ավարտական աշխատանք:

1. Կուրսային աշխատանքները նախատեսված են մասնագիտական ոլորտում ստացված տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների զարգացմանը: Կուրսային աշխատանքները կատարվում են 5-ից 7-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 7-ից 9-րդ) կիսամյակներում և գնահատվում են 20 միավորանոց սանդղակով: Կուրսային աշխատանքի կատարման կիսամյակում համապատասխանաբար նվազում է այդ կիսամյակի լսարանային բեռնվածությունը (ժամերը):

2. Մասնագիտական պրակտիկան կազմակերպվում է 8-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 10-րդ) կիսամյակում՝ համապատասխան ամբիոնի (կենտրոնի, ինստիտուտի) կողմից կազմված և հաստատված ծրագրով: Այն կազմակերպվում է մասնագիտական ուղղվածություն ունեցող ձեռնարկություններում և հաստատություններում՝ 6 կրեդիտ աշխատածավալով և 6 շաբաթյա տևողությամբ, որն ավարտվում է ստուգաբքով: Ուսանողները պրակտիկայի կատարման վերաբերյալ ներկայացնում են սահմանված ձևաչափի և բովանդակության հաշվետվություն: Մասնագիտությամբ աշխատող ուսանողն ազատվում է մասնագիտական պրակտիկայից՝ աշխատանքի վայրից ներկայացնելով համապատասխան տեղեկանք:

3. Այս բաժնում, ելնելով մասնագիտության առանձնահատկություններից, կարող են նախատեսվել նաև պրակտիկայի այլ ձևեր, որոնց իրականացման կիսամյակը և կրեդիտատարությունը (շաբաթները) որոշում է ֆակուլտետը կամ մասնագիտացնող ամբիոնը (պահպանելով 1 շաբաթ = 1 կրեդիտ համամասնությունը): Ծրագրում պրակտիկայի այլ ձևեր նախատեսելու դեպքում համապատասխանաբար նվազում է պարտադիր մասնագիտական դասընթացների քանակը, կրեդիտների ընդհանուր թիվը, ինչպես նաև լսարանային բեռնվածությունը (ժամերը):

4. Ավարտական աշխատանքը բակալավրի կրթական ծրագրի անհատական և ամփոփիչ բաղադրիչն է, որի պատրաստումը և պաշտպանությունն առկա ուսուցման դեպքում իրականացվում է 8-րդ, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 10-

րդ կիսամյակում: Բոլոր ուսանողները մինչև 7-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 9-րդ) կիսամյակի ավարտը պետք է ունենան ավարտական աշխատանքի հրամանագրված թեմաներ և ղեկավարներ: Հրամանագրումն իրականացնում է ֆակուլտետը: Ավարտական աշխատանքի ձևաչափին և բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանվում են համաձայն՝ «Երևանի պետական համալսարանում ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգի»: Ավարտական աշխատանքի պատրաստման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 20 կրեդիտ ուսումնական բեռնվածություն:

3. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բակալավրի ծրագրի բաղկացուցիչ դասընթացների կազմն ու բովանդակությունը, ինչպես նաև դասավանդման, ուսումնառության և գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրվում են այնպես, որ բավարարեն ոլորտը կարգավորող հետևյալ պաշտոնական փաստաթղթերի պահանջները.

1. *ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի* մակարդակների նկարագրիչներով բակալավրի որակավորման աստիճանի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը՝ արտահայտված գիտելիքների, կարողությունների և հմտությունների անհրաժեշտ կազմով³:
2. *ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ոլորտային շրջանակի* (առկայության դեպքում) որակավորումների նկարագրիչներով տվյալ մասնագիտությամբ բակալավրի որակավորման աստիճանի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը՝ արտահայտված գիտելիքների, կարողությունների և հմտությունների անհրաժեշտ կազմով:
3. ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման ղեկավար ձեռնարկի⁴ և կրթական ծրագրի մասնագրի⁵ կազմման պահանջները:
4. Տվյալ մասնագիտական ոլորտում կիրառվող միջազգային ծրագրային կողմնորոշիչները և հենանիշները (բենչմարքները), տեղական և գլոբալ մասնագիտական աշխատաշուկայի պահանջները և այլն:

³ ՀՀ կառավարության 2016 թ. հուլիսի 7-ի N 714-Ն որոշումը ՀՀ որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին:

⁴ ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման ղեկավար ձեռնարկ, 2012 թ.:

⁵ ԵՊՀ կրթական ծրագրի մասնագրի լրացման ուղեցույց, 2016 թ.:

